

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵՂԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն օրենքի նպատակը Հայաստանի Հանրապետությունում սպառողական կրեդիտավորման պայմանագրերի կողմ համարվող կամ սպառողական կրեդիտավորումից օգտվելու ցանկություն ունեցող սպառողների իրավունքների պաշտպանությունն է, կրեդիտավորման համակարգի զարգացումը և միասնական կանոնների սահմանումը, ֆինանսական միջնորդության ավելացումը և ֆինանսական համակարգի նկատմամբ սպառողների վստահության բարձրացումը:

ԳԼՈՒԽ 4

ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱՊՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Հոդված 13. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման բանաձևը և բացատրությունները:

1. Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A - կրեդիտի գումարը (կրեդիտավորողի կողմից սպառողին տրամադրված կրեդիտի սկզբնական գումարը).

n - կրեդիտի մարմանն ուղղված վճարի թիվը.

N - կրեդիտի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.

K_n - կրեդիտի մարմանն ուղղված n -րդ վճարի գումարը.

D_n - կրեդիտի տրամադրման օրից մինչև կրեդիտի մարմանն ուղղված n -րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.

i - ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են կրեդիտավորման պայմանագրից կամ այլ կերպ: